

Տէմն ի խաղցէ!—մանուկ մը երբ ընտանիքի մէկ անտամիխ կամ դրացիին նման շարժումներ, կամ գործեր կրնն, կրանն՝ արգանդի մեջ եղած ատեն անոր դիմն է խաղցեր:

Տիւ կաս մէնակ նրուսազլմ—ոչ մի բանն լուր շունիս. Տիւս քյախանա, ներս սատանա—դուրսը արդար, ներսը շարագործ:

Տկեց—բոլորն ալ խմեց:

Տղն արն վոտը—մայրեր հարմար տեղ մը կնստեին, երեսան իրենց ոտքին վրա կղնեին, խրախուսելով, որ կարիքը հոգա, վարձվե ժամանակին և մարուր մնա:

Տղն ընցուց—վիժեց:

Տնուրիկ կյո՛ւծե՛լ—կտավի լավ տեսակը հյուսել:

Տոճկո՛ւսավ—բարկացավ, փախավ:

Տոմիտ կտնեն—զգույշ կեցիր, ծեծ կուտես:

Տրախտ վո՛ր ես շեմ Լրթա՛, իշվանքը թող մէջ թափալնն—եթե ես չպիտի օղտվեմ, ով կուղի թ.ւղ վայելի:

Տոխուն րկի, որ աճի—հոտավետ համեմի հողը փըխրեցուր, որ աճի: Լոգ տար:

Տուռ փակ պախի, տրկցիտ կյող մի պոնե—բո անփթաթյան պատճառով վնասված ըլլալուդ համար ուրիշին մի մեղադրեր:

Տօ տղա լըմ խէր—մէր ղիկ կարգեր ե՛ն, ճժուկ—մժուկ էլեր ի—հին ատեններ նոր փեսաներ կկարծեին (չէ որ մանուկ կամուսնանալին), թե իրենց կիներ շրի առուներեն զավակներ կգտնեին և կս՛մ հրեշտակ մը երկնքեն կբերեր զավակ:

Ծվրվեր ի—խենթացեր է:

Ուղտ ինչկանդար որ ինի, կաշին նորից եղան պեռ ի—երբ որ մեկը կաղթատանա, պատիվն ու հարդը նորեն կմնան:

Ուճկուտո՛ր կէլնի—սեթեթեթում է, նազ է անում (աղչիկը):

Ուռն արե—ծնանելու ժամանակն է:

Ուոց կտրե՛լ—փեսայի վզից նարոտը հանել կամ արձակել:

Ուրիշի շվնօվ խո՛ր էճնօղի հա՛լ դյօ էտա կէլնի—ուրիշին հավատացողի վիճակը այդ կըլլա:

Փախուկ—խենթ:

Փարա՛ եմ տվե, շում տոճն կխէծենեմ—մինչև ետին կաթիլ պիտի քամեմ: Վարձած կենդանին գործածել անխնա:

Փեո՛տ—լորձոճքոտ բերան:

Փէշերտ փուի աղօց կէնամ—ինքզինքդ շատ մի արդարացներ:

Փօսա խամբրելու կնաց—մեռավ:

Քյամին մեռավ ցոտու—անհավատալի լուր:

Քյար թալել—հնոցեն հանված խեցեղեններ երբեմն փոքրիկ նշան մը կունենալին իրենց վրա, որը նշան էր, թե այդ աման ծակվելու կամ ջուր մատուցելու ենթակա պիտի ըլլար շուտով, և գնողնեք կըսեին՝ քար թալել, ու գնելի կզգուշանալին:

Քյար խանել—վարժ ճատրակ խաղացող մը, երբ փոխանակ 16 քարի, 14 քար կշարե իր կողմ և կհաղթե, քար հանողէ կկոչվի:

Քյեզնից կտրյա—քեզ չի սիրեր:

Քյեռկիստ խորօտ ի—առևտուրի մեջ երբ մեկը կաշխատի ապրանքատերը համոզել ու ցած գնով

գնել, ապրանքատերը անոր միտքը հասկնալով, կըսե՝ քչեռկիստ խորօ՛տ ի, այսինքն թե՛ զիս շեռկնար համոզել:

Քչե պոնեմ—ենթադրենք, թե...

Քյո խօր դիւքյան պաց ի—տափատիզ կոճակները կոճակ:

Քյո ուժ մէնակ վէր ձիկ կախտի—ուրիշներեն կվախնաս, իմ վրաս կհարձակվիս:

Քյուռակի թալել—էշերու կամ ձիերու վիժում:

Քիշ պոնցի, շոտ աճոցի—քիշ բարձիր, որ շուտ վերադառնաս:

Չղէն քյաշիցի—առանց քննության վճիռ արձակող Օրմանյան պատրիարքի խոսքը. երբ Վան կուգա ընենելու որոշ խնդիր մը, իրեն կհարցվի՝ ի՛նչ փաստերու վրա հիմնված վճիռ տվիր:—Օղէն քյաշիցի,—կըսե, և այս ոճը Վանի խոսվածքի մեջ կանցնի:

Ո Ղ Զ Ո Ւ Յ Ն Ն Ե Ր Ե Վ Բ Ա Ր Ե Վ Ն Ե Ր

- Պարի լո՛ս:
- Աստժու պարին:
- Պարի լո՛ս ծե:
- Հիւսո՛ մէջ մնաս:
- Պարի օր ծե, տղէյներ:
- Պարին վէրէտ, սաղ էլենաս:
- Պարե, պարե, պարե:
- Պարու մէջ մնաս: Էկար պարի: Արե խենքյ:
- Ողճուճ, Քրիճոր:
- Օրհնյա ի տէր, տէր հայր:
- Ողջույն տանս այս:
- Օրհնեսցէք, հայր սուրբի (վարդապետ):
- Ես քեզ տեսա: — Ես քեղ տեսա: (Այս ձեր Վանի մեջ բողոքականները գործածեցին, բայց չընդհանրացավ ու յոռոցվեցավ):
- Տօ տղա, տի իկի՛ր ես: — Խավալա իկիր հմ: (Շատախցիներու բարեաձևն էր Լըրեմն):
- Օղորմի աստված: — Օղորմի ծնողացտ: (Պառալնեբը եկեղեցիեն իրենց վերադարձը կնշխին):
- Մնաս պարի: — Էթաս պարի:
- Մնաս պարի: — Էթաս... (կողմնակի) կրունդյտ էսա դեխ (երբ ձանձրացնող հյուր մը կմեկներ):

Ս Ն Ո Տ Ի Ա Պ Ա Շ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աքաղաղ—Մոկս զավառի Եղերով լեռան վրա շինված Փոթկու կամ Փոթորկի սուրբ Գևորգ վանքը միշտ կունենար աքաղաղ մը, որը կզուշակեր ձյունափոթորիկը, կանչելով կամ լուռ մնալով և կզուշակներ ճամփորդները ճամփա ելլելի:

Բյիթտ քյո՛րվի—հյուր պիտի ունենաս:

Սոճրակղ կքյո՛րվի—տան տերը վարձք ուզելու պիտի գա:

Աշ ափդ կքյո՛րվի—դրամ պիտի ստանաս:

Ձախ ափդ կքյո՛րվի—դրամ պիտի ծախսես:

Ճաշի ատեն անակնկալ հազե մը բռնվիս—քո մասին խոսողներ կան:

Կրակի վրա թըկս—երեսիդ վրա վերքեր պիտի բուսեն:

Հավկիթի կեղևը այրես—հավը մեղքի ցավ պիտի ունենա:

Արջնդ կապոցով մը ծննդկանին բարձին տակը դնես—չար ոգիներ հեռու կմանա:

Երեխայի հագուստի վրա կապույտ բուստեր կարես—չար աչքն հեռու կմնա:

Մածուն տաք-տաք ուտես—հորթը շոր պիտի ծամես:

Հացառը հացթուփի ձեռքն թոնիրը իյնա—տունեն մեկը պիտի մեռնի:

Շուները ձեր տան մոտիկ ոռնան—տունեն մեկը պիտի մեռնի:

Այրած հացը ուտես—դրամ պիտի գտնես:

Աղջիկ մը փոքր հասակին շերտի լզն—հարսնիքին օրը ձյուն կամ անձրև կտեղա:

Զախ ականջը կանչե—գեշ լուրեր պիտի ստանաս:

Հին կոշիկ մը հարսի ետևն նետվի—լավ բաղձանք-ներու նշան է:

Թոնիրն ելած առաջին հացին վրա ուռեցքներ ըլլան—առատության նշան է:

Կատու մը թաթով երես լվա—հյուր պիտի ունենաս:

Խոսքի ատեն մեկը զույգ փռնգտա—հաշտակ գործի նշան է:

Խոսքի ատեն մեկը կենտ փռնգտա, բայց ճրագը վառէ—նորեն հաշտակ գործի նշան է:

Մոր մը ծննդաբերությունը դժվարանա—պառավ կանայք ծաղկավիլ մը վառելով ծննդկանը երեք անգամ անոր մոխիրի վրայն անցնելու են:

Կիրակի օր եղունգները կտրես—ձեռներդ պիտի դողան:

Կիրակի օր լոգանք առնես—գեշ նշան է:

Զմյուռնված երեխա մը համբուրես—ակոռայի ցավ շն ունենար:

Առտու կանուխ կաղի մը հանդիպիս—գործի հաջողության նշան է:

Առտու կանուխ կույրի մը հանդիպիս—գործի ձախորդության նշան է:

Գինի խմած ատեն բաժակդ ամբողջովին պարպես—զոքանջը շուտ պիտի մեռնի:

Ուրբաթ երեկո կար կտրես—աչքի ցավ պիտի ունենաս:

Շարաթ օր երեխայի մազերը կտրես—զլխի ցավ պիտի ունենա:

Փոքր երեխայի եղունգները կտրես—երեխան մեծնալով գոյ պիտի դառնա:

Դրամի կուտ առանց աղելու ուտես—բթամիտ կըլլաս:

Գիշեր ջան հաց ձգես—տան առատություն կպակսի:

Կատուն խոտ ուտես—պատերազմ կնշանակես:

Ննջեցյալի մը սենյակ մեկը քնանա—գեշ է:

Որթատունկի շուր երեսիդ քսես—մազերդ շուտ կրուսնին:

Հացն հետո սեղանն անմիջապես շմարես—աստուծո հրեշտակը կբարկանա:

Երիտասարդ մը թոնրատուն մտնե բաղարջ թխելու ժամանակ—բաղարջներ կրակի վրա պիտի թափին:

Կուզես, որ պանդուխտդ շուտ վերադառնա—անոր ճամփու պաշարեն հաց մը զաղտնի վերցուր ու պահես:

Կուզես շատ հաճախորդներ ունենալ—շան գանգ մը թաղե խանութիդ առաջ, զաղտնի:

Կուզես որ կատղած ջուն քեզ շի խածնե—մեծ պահոց առաջին շարաթ պահք պահես:

Կուզես փորձանքե ազատ մնալ—ձկան զլխի խաշածև ոսկորը զխարկիդ մեջ պահես:

Սոխի կամ սխտորի կեղևները կրակի վրա նետես—վիրավորներու վերքեր կմոռան:

Տեղե մը փոխազրված ատեն մեղան հետդ տանիս—անբախտություն է:

Բոշայի մը հետույքին մատդ դպցնես—ձեռքդ սուր կառնե, ձեռքիդ ափը հեսանաբար կդառնա:

Զեռքեդ հացի կտոր մը վար ինա—կնշանակե թե բարեկամներեդ մին անոթի է:

Երեսներդ կայրին—քու մասին խոսողներ կան:

Մխալմամբ կամ աճապարանքով զուլպաներդ դարձված հագնիս—բախտավորություն է:

Ազոնավ մը տանդ մոտ կոնչե—գեշ նշան է:

Զախ աչքդ կխաղա—տխրության նշան է:

Հավ մը աքլորի պես խոսի—գեշ նշան է:

Լուսնի շնորը նորելուն՝ երեկո գործի սկսիս—հաջողության նշան է:

Նղունգներուդ վրա ճերմակ բիծեր կերեին—նվեր պիտի ստանաս, իսկ եթե բուր մատի վրա է ճերմակ բիծը—նոր հագուստ պիտի ունենաս:

Երազիդ մեջ ատամ կորսնցնես, բարեկամներեդ մին պիտի մեռնի, իսկ եթե առջևի ատամդ է կորսնցնես—գեշ, ծնողներեդ մին պիտի մեռնի:

Կուզես իմանալ հղի կնոջ արու կամ էգ զավակ ունենալ—իրմե գաղտնի զլխին վրա աղ ցանես, եթե քիթը քորես, տղա կունենա, եթե ականջը քորես՝ աղջիկ:

Տուն ձգած ոտնամաններուդ կտուցները երկու հակառակ կողմերու դարձած են—գործդ անհաջող պիտի երթա:

Մկնտո հաց (մուկ դպած) ուտես—ձայնդ պիտի քաշվի (կղձվարանաս խոսիլ):

Տունեն հեռու ես ու կճամփորդես—որպեսզի կինդ հավատարիմ մնա, զուլպաներեդ մինը շրջե (ներսի կողմը դուրս դարձուր), ապա հագիր:

Քավոր շն եղել—հավ շն կրնար մորթիլ:

Փոքրերը կատակի համար, իրենց մոր վելուն կամ յազման զլուխին նետեն—զայլը անոնցմե չի վախնար:

Մեկի մը երեսին վրա պուճ (փոս) գոյանա խնդացած կամ ծիծաղած պահուն—նշան է, թե իր մայր գինք ծնանելն առաջ հավկիթ գողցած է:

Մանկաբարձուրյուն⁴—Երբ կին մը երկուսքի ցավերեն բռնվեր, տատմբը կկանչի: Երջապատող կիներ կբարեմաղթեն, խոսքերին տատմորն ուղղելով:

— Մեղտ տալմը էլնի:

— Մեղտ ուղորլի էլնի:

— Մեղտ թեթե էլնի:

Եթե ծնողաբերությունը դժվարանար, երիտասարդները ատրճանակ կպարպեն, իսկ զուլպանու մեջ՝ հրացան:

⁴ Արարուց շրջանի մանկաբարձն էր ութսունամյա տատմբը Թառիկ, փորձառու և ամենքեն սիրված: Հասնողին կըսեր՝ տղա, զիկ կճանչնաս, այսինքն՝ գիտե՛ս, որ ես եմ եղած քու մանկաբարձդ: Ապրեցավ 90 տարի:

Տատամյորը նորածինն լիկէնի մէջ կղներ: Պորտը կկա-
պեր: Քեկրուն աղ կղներ: Մանկան բերնի առաս-
տաղին աղյուր կքսեր և ապա կոնդախ կղներ՝
մրթմրթալով՝
— Պարով-խլրով էլնի, քամարով ոսկի կապի,
խէրով-մերով մեծնա:
Ապա ծննդկանի բարձի վրա ասեղներ և նարեկ կղներ,

բարձին տակ՝ երկաթե կրակ խառնող ձոռ մը
(շիշ), որ շար ոգին ծննդկանի շիղարը շտաներ:
Դրացիները մեկիկ-մեկիկ ներս կուզային: Կանայք
շէրպէթ կխմեին, իսկ տղամարդիկ՝ օղի: Ութ օր
հետո նորածինն եկեղեցի կտանեին, կմկրտեին և
առաջին անգամն ըլլալով՝ զայն կհամբարեին:

Ր Ա Ռ Ա Ր Ա Ն

Աղարբաշի—հարսանիքի աղարների գլխավորը
Ալամ—աշխարհ
Ալ-գարահի—կարմրադուր (գործվածք)
Ալնախ—թաշկինակ
Ալլափուխ—արագաշարժ
Ախթարբայ—բախտագուշակ գիրք
Ախպրանց արուն—ծաղկի անուն
Ակալ—գլխարկ (արարական ձևի)
Ակըրկիլ—գեմ դեմիգալով արգելի (կամ՝ կարթ)
Ակլիկլայա—կալի պայտած և արմարանք, որ դրվում
էր թոնրի ական դիմաց՝ վառելուց առաջ
Ակութ—թոնրի տեսակ, կրակարան
Ահրիման—սատանայապետ
Աղաճանքայ—խնդրանք, պաղատանք
Աղոթք—հիշտ, իսկապես
Աղքատան—աղքատի անուն
Ամբար—արմավ
Անձեղ—կաշաղակ
Անկալատ—անթերի, գեղեցիկ
Անկյան—ուշ, անագան
Անկլընալ—ուշանալ
Անշանքայ—այնքան
Ապով—պատճառով
Աշալմ—շտապ
Առչկան—իլիկ
Ասպարածին—աստվածածին
Ատովոր—աշխարհ
Արա— թարա—հարտ
Ափանթաթէկ—չորեքթաթ անի (գնալ)
Բաղըրգլան—վաճառական
Բաժ-բոյ—հասակ
Բայրամ—թուրքերի կրոնական տոն
Բաշարիլ—բարեխոսիլ
Բառօժ—արեգունի
Բարբար—վարսավիր
Բէնավշե—մանուշակագույն
Բէր—ուշխարի կթելու տեղ (բացօթյա)
Բըլպ—պատուհաս, փորձանք
Բիլա բլե—առանց քեզ
Բիստ—քսան (քրգ.)
Բիթա—թուփ, փունջ (վարդի)
Բիւթուն—ամբողջ, բոլոր
Բարկտիլ—զառանցել, անկապ-անկապ խոսել
Բուլաշըզ—խառնակիչ, պղտոր մարդ
Բուսուլ—հասակ
Բուստ—թանկագին քար՝ կապույտ գույնի
Գարձ—քյոսա
Գլինա—կրկին, նորից
Գյո—ահա

Գյօլի կազ—լճի սագ
Դալմա—պառավ կնոջ վերնազգեստ, առաջը կոճկած
Դհա-դհա—տակավ-տակավ, դեռևս
Դանյա—աղբյուրի ակ
Դաշ—նախ, նախ և առաջ
Դավի—վեճ, հաշիվ
Դէխ—դեպի
Դմեիկ—ժակող խիստ փշոտ վայրի բույս
Դիլաքայ—ըղձանք, փափագ
Դիվան դարգլախ—դատուհատաստան
Դղէզ—վայրի մեղվի տեսակ (շեկ)
Դուլմէս զոռեց—զուլխս ցավեց (փոխաբերարար)
Դօդրի—հիշտ, ուղիղ
Դօրե-դօր—հերթով
Զաղար—տնային շնիկ
Զարբար—վնաս
Զլզղըզալ—մեղմորեն հոտող վճիտ շրի ցուցանքը
Զպուն—կանացի վերնազգեստ
Զօզան—սարատեղ
Զօուլ—զորավոր, ուժեղ
էգ պարե—այգ (արև) բարև
էօրօս պաց—երեսբաց (բառացի)՝ պատշաճ
էրէրի—գուլ՝ Թիմարում
էրէմակ—վայրի ուտելի փշոտ բույս (զոխ)
Ըռտա—արիշտա
Ըսկընա—այսպես
Ըստէփուն—հետո, ապա
Ըտկընա—այդպես
Բաբախ—մետաղե սկուտեղ
Բաթ—բրդե գուլպա
Բախթէկ—լրիվ շկազմավորված ձու
Բախսէ—թաղիքե, փոխաբերարար՝ բուլ, անկամ
Բախսի—Ֆրուչա—խոզանակ, դրված պատին հաս-
տատված տախտակին
Բակ—փայտե մուրճ
Բաշիր—փայտե շտեմարան
Բամբախ—պատվեր, ապսպրանք
Բարդի—գերձակ
Բափ թափա—թանձր թխած հացի տեսակ
Բաթախ—անիվ
Բըրըզ—շար ոգի, ճիվաղ, ալք
Բըմբըկ—մեղմել, հանգստանալ
Բնթոց—կերակուրի փայտե խառնիչ (փայտե շերեփ)
Բոլախավատ—թերահավատ
Բօղղ—բացի
Իկլի—այգի
Ինե—ներս, մեջ
Իշալահ—աստծով
Իշլիկ—տղամարդու բաճկոնակ (երբեմն՝ բամբակոն)
Իշտե—ահավասիկ